



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ

ՆՍԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԻՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

12.09.2023թ.

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 27 անդամները:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Զիլինգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալբաբեկյանը, Ա.Զաքարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նախքան նիստի սկսվելը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը ներկայացրեց Չարենցավան համայնքի ավագանու անդամների ավագանու նիստերից կամ քվեարկություններից, ինչպես նաև ավագանու մշտական հանձնաժողովների նիստերից բացակայությունների մասին տեղեկատվություն:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ են ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի թիվ 1 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

- 1) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
- 2) Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 78-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
- 3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Արարեսցա՛նք արձանագրություն և քարտեզ կարգի մասին  
կայարքան ղեկավար: Բ. Դ. Քարտուղարի ավագանու անդամ  
Չարենցավան